Երկրորդ ընթերցում

Կ-442[31]-25.11.2022-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Փրկարար ծառայության մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-171-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 1-ին մասում «կարգավորում է» բառերից հետո լրացնել «ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնում և վերջինիս ենթակայությամբ գործող, » բառերը:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետում «համապատասխան նախարարին» բառերը փոխարինել «ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի (այսուհետ՝ Լիազոր մարմին) ղեկավարին» բառերով:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետում, 13-րդ հոդվածի 3-րդ մասում, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունում, 32-րդ հոդվածի 14-րդ մասում, 50-րդ հոդվածի 2-րդ մասում, 53-րդ հոդվածի 1-ին մասում և 3-րդ մասի 2-րդ պարբերությունում, 55-րդ հոդվածի 1-ին մասում, 63-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ պարբերություններում և 3-րդ մասում «համապատասխան նախարարը» և «համապատասխան նախարարի» բառերը փոխարինել համապատասխանաբար «Լիազոր մարմնի ղեկավարը» և «Լիազոր մարմնի ղեկավարի» բառերով և համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 4. Օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Հայաստանի Հանրապետության պաշտպանության և ներքին գործերի նախարարությունների, ազգային անվտանգության մարմինների համակարգերում զինվորական ծառայության հիմնական պաշտոնների, քրեակատարողական ծառայության հիմնական պաշտոնների, հարկադիր կատարումն ապահովող ծառայության, դատախազության պաշտոնների, քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության ինքնավար պաշտոնների և հակակոռուպցիոն կոմիտեում ծառայության պաշտոնների (այդ թվում ինքնավար պաշտոնների) միջև համապատասխանությունը սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 5. Օրենքի 14-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Փրկարարական ծառայության գլխավոր, ավագ, միջին և կրտսեր կոչումները շնորհում է ծառայողին փրկարար ծառայության համապատասխան պաշտոնին նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը:».

2) 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Օրենքի ամբողջ տեքստում «համապատասխան նախարարության ուսումնական հաստատություններ», «համապատասխան նախարարության ուսումնական հաստատություն», «համապատասխան նախարարության բարձրագույն ուսումնական հաստատություն» և «համապատասխան նախարարության բարձրագույն ուսումնական հաստատություններ» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «Լիազոր մարմնի ուսումնական հաստատություն» բառերով և համապատասխան հոլովաձևերով:

Հոդված 7. Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Փրկարար ծառայությունում կամ սույն մասում նախատեսված մարմիններում ծառայություն անցած (աշխատած) և զինվորական կամ հատուկ կոչում կամ դասային աստիճան ունեցող քաղաքացիներին Փրկարար ծառայությունում պաշտոնի նշանակելիս շնորհվում է իր զինվորական կամ հատուկ կոչմանը կամ դասային աստիճանին կամ պահեստազորում ունեցած կոչմանը համապատասխան փրկարար ծառայության կոչում: Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և ազգային անվտանգության մարմինների համակարգերում շնորհված զինվորական կոչումների, ոստիկանության կոչումների, քրեակատարողական, հարկադիր կատարումն ապահովող ծառայություններում, քննչական կոմիտեում, հատուկ քննչական ծառայությունում, հակակոռուպցիոն կոմիտեում, դատախազությունում շնորհվող արդարադատության կոչումների և դասային աստիճանների, պահեստազորում ունեցած կոչումների համապատասխանությունը փրկարար ծառայության կոչումներին սահմանում է Կառավարությունը:»:

Հոդված 8. Օրենքի 21-րդ հոդվածում «քաղաքացիներին՝ որպես կուրսանտ գրանցելիս» բառերը փոխարինել «այն քաղաքացիներին՝ որպես կուրսանտ գրանցելիս, որոնք ընդունվել են փրկարար ծառայությունում պաշտոնի նշանակվելու համար իրականացվող կրթական ծրագրերով» բառերով:

Հոդված 9. Օրենքի 25-րդ հոդվածի ա) կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) Լիազոր մարմնի բարձրագույն ուսումնական հաստատություն ավարտած այն ծառայողներին, որոնք սովորել են փրկարար ծառայությունում պաշտոնի նշանակվելու համար իրականացվող կրթական ծրագրերով.»:

Հոդված 10. Օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասում «Կարճաժամկետ ազատազրկման մեջ» բառերը փոխարինել «Կալանքի տակ» բառերով:

Հոդված 11. Օրենքի 29-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Առանձին մասնագիտություններով փրկարար ծառայության անցնելու համար կարող են սահմանվել այլ (այդ թվում՝ տարիքային) պահանջներ: Այդ մասնագիտությունների ցանկը և դրանց համար նախատեսված պահանջները սահմանում է Կառավարությունը:».

2) 6-րդ մասում «օրենքի» բառից հետո լրացնել «31-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով,» բառերը:

Հոդված 12. Օրենքի 31-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 31. Փրկարար ծառայությունում պաշտոնի նշանակելը**

1. Փրկարար ծառայության տնօրենին Լիազոր մարմնի ղեկավարի առաջարկությամբ նշանակում և ազատում է վարչապետը:

2. Փրկարար ծառայության տնօրենի տեղակալներին Փրկարար ծառայության տնօրենի առաջարկությամբ նշանակում և ազատում է Լիազոր մարմնի ղեկավարը:

3. Փրկարար ծառայության բարձրագույն և գլխավոր պաշտոնների խմբի ծառայողներին պաշտոնի նշանակում (ծառայության ընդունում) և պաշտոնից ազատում է Լիազոր մարմնի ղեկավարը:

4. Փրկարար ծառայության ավագ, միջին և կրտսեր պաշտոնների խմբի ծառայողներին պաշտոնի նշանակում, պաշտոնից ազատում և փոխադրում է Փրկարար ծառայության տնօրենը:

5. Փրկարար ծառայության պաշտոն զբաղեցնող ծառայողների համար վարվում է ծառայողի անձնական գործ: Անձնական գործը վարելու կարգը և առանձնահատկությունները սահմանում է հանրային ծառայությունը համակարգող փոխվարչապետը:»:

Հոդված 13. Օրենքի 32-րդ հոդվածի 7-րդ մասում, 34-րդ հոդվածի 1-ին մասում, 53-րդ հոդվածի 1-ին մասում, 70-րդ հոդվածի 2-4-րդ, 5-10-րդ մասերում և 71-րդ հոդվածի 1-ին մասում «համապատասխան նախարարարության» բառերը փոխարինել «Լիազոր մարմնի» բառերով:

Հոդված 14. Օրենքի 32-րդ հոդվածի 10-րդ մասում և 57-րդ հոդվածի 7-րդ մասում «լիազոր մարմնի ուսումնական հաստատություններում» բառերը փոխարինել «Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում» բառերով:

Հոդված 15. Օրենքի 32-րդ հոդվածի՝

1) 11.1-ին մասում «կառավարությունը» բառը փոխարինել «Լիազոր մարմնի ղեկավարը» բառերով.

2) 12-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Փրկարար ծառայության անցնող քաղաքացու և Լիազոր մարմնի միջև կնքվում է աշխատանքային պայմանագիր, որը ստորագրում է՝

1) բարձրագույն և գլխավոր խմբերի պաշտոն զբաղեցնող ծառայողների համար Լիազոր մարմնի ղեկավարը.

2) ավագ, միջին և կրտսեր խմբերի պաշտոն զբաղեցնող ծառայողների համար Փրկարար ծառայության տնօրենը:».

3) 12.1-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 16. Օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասում «կառավարությունը» բառը փոխարինել «Լիազոր մարմնի ղեկավարը» բառերով:

Հոդված 17. Օրենքի 57-րդ հոդվածի 7-րդ մասում «սովորողների» բառից առաջ լրացնել «փրկարար ծառայությունում պաշտոնի նշանակվելու համար իրականացվող կրթական ծրագրերով» բառերը:

Հոդված 18. Օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասում «հաստատությունում» բառից հետո լրացնել «փրկարար ծառայությունում պաշտոնի նշանակվելու համար իրականացվող կրթական ծրագրերով» բառերով:

Հոդված 19. Օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) ժ) կետում «Փրկարար ծառայության» բառերը փոխարինել «Լիազոր մարմնի» բառերով.
2) ժգ) կետից հանել «պայմանագրի ժամկետը լրանալու կապակցությամբ կամ» բառերը:

Հոդված 20. Օրենքի 68-րդ հոդվածի 1-ին մասում «Համապատասխան նախարարությունն» բառերը փոխարինել «Լիազոր մարմինը» բառերով, «հաստատություններ» բառը փոխարինել «հաստատություն» բառով:

Հոդված 21. Օրենքի 69-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «համապատասխան նախարարության համակարգում գործող պետական ոչ առևտրային կազմակերպություն է (ակադեմիա)» բառերը փոխարինել «Լիազոր մարմնի ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կազմակերպություն է» բառերով.

2) 4-րդ մասում «դոցենտների,» բառերից հետո «բարձրագույն» բառը հանել:

Հոդված 22. Օրենքի 75-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 23. Օրենքի 78-րդ հոդվածի 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 24. Եզրափակիչ մաս և անցումային դրույթ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում Ներքին գործերի նախարար նշանակելու մասին Հանրապետության նախագահի հրամանագիրը ուժի մեջ մտնելու պահից, բացառությամբ սույն հոդվածի երկրորդ մասի, որը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն մասի ուժի մեջ մտնելուց հետո Փրկարար ծառայության տնօրենը և նրա տեղակալները համարվում են իրենց պաշտոններում պարտականությունները ժամանակավոր կատարողներ և շարունակում են պաշտոնավարել մինչև այդ պաշտոններում նշանակումներ կատարելը: